

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ԳՐԻԳՈՐ ՊԱՆԼԱՒՈՒՆԻ ՍԱԳԻՍՏՐՈՍ

Լեո Անճևուրսի մէջ լոյս տեսաւ (1987) Բանասիրական Գիտութիւնների Դոկտոր, Փրոֆէսէօր Լեոն Գ. Խաչերեանի նոր աշխատասիրութիւնը, Գրիգոր Պանիստրոսի Մագիստրոս տիտղոսով, նուիրուած անոր Կեանքին ու գործունէութեան: Հատորը կը բաղկանայ 497 էջերէ և ունի հետեւել բովանդակութիւնը:

Երկու Խօսք, Տաթև Արքեպս. Սարգիսեանէ (էջ 9-11), Հեղինակի կողմից՝ իրեն նախարան (էջ 13-15), Ուսումնասիրութիւն (էջ 19-352), բաժնուած վեց Գլուխներու: Կ'արժէ յատկապէս յիշել Զօրբորդ Գլուխը, որուն վերնագիրն է, Գաղափարաբանական պայքարը կրօնահրձուածողական հոսանքի՝ այսպէս կոչուած «Թոնդրակեան շարժման» դէմ (էջ 147-258):

Գրիգոր Մագիստրոսի յօրինած «Մեկնութիւն Գերականի» երկին Բնական Բնագիրը կը գրաւէ աւելի քան 100 էջ (351-464): Ասոր կը յաջորդէ «Synopsis»ը, որ կը ներկայացնէ ուսումնասիրութեան ամփոփումը Անգլերէն լեզուով (էջ 465-488): Անձնանունների և Տեղանունների Ցանկը շատ համառօտ է (էջ 489-490): Յաջորդ էջերը (491-494) կը պարունակեն Ցանկը օգտագործուած Մատենագրական Աղբրերների և Ուսումնասիրութիւնների:

Մանր աշխատասիրի արդիւնք է սոյն երկը և արժէքաւոր յաւելում մը յարգելի Հեղինակին գրական վաստակին վրայ: Մեր ընթերցման ընթացքին հանդիպեցանք տեղեկ այնպիսի տողերու, որոնց մասին հարկ կը սեպենք ներկայացնել հոս մեր նկատողութիւնները՝ համառօտակի:

1. — Թէ Գրիգոր Մագիստրոս Երրանցեանի ալ գիտէր չէ կարելի հաստատել ճշայն Շուկուհի ... բառ Երրանցեաց Սոււորը (էջ 52) քառաքնական համեմատութեամբ: Ս. Գրքի հայերէն թարգմանութիւնը ինքնին ծանօթ կը դարձնէր Սա-

աւղ անունը, որ Երրանցական արտասանութեամբ ալ, «Շուաւղ», կը տեսնուի Ա. Մնացորդաց և Ա. Մակարայեաց Գրքերուն մէջ: Մագիստրոս Երրանցական Շուաւղը չէ գործածած, որ Պարսկերէն Շապուհին աւելի մօտ է, այլ յաւանական է հայացուած Սաւաղը:

2. — Էջ 162, առդ վարէն 14-15. — «Եւ զոր բարին կերպարանին՝ կրկին կղկղան» դէք և առաւել ուրացութիւն վարկանիքս. — Նարեկացի Գրիգորի այս խօսքը աւելի ճիշդ կրնայ թարգմանուիլ, մեր կարծիքով, ըստ հետեւեալին: Եւ այն բանը, որով բարի կը ձևանան, կրկնապէս անպէտ աղբ սեպեցէք և առաւել ուրացութիւն համարեցէք:

3. — Հատորիս մէջ բաւական ընդարձակ տեղեկութիւններ արուած են Թոնդրակեցիներու շարժման մասին: Հեղինակին ուղիղ դատումներէն ներս տեղեկ ուղղութեամբ են անճիշդ տողեր. ահաւասիկ փոքր պարբերութիւն մը, շատ ծանրակիւ յայտարարութեամբ. — Շարժման ահագնութիւնն ապացուցուած է նաեւ նրա նով, որ «վեց վարդապետներ» հրաժարուելով հայոց հոգեւոր նուիրապետութիւնից՝ անցել են աղանդաւորական շարժման կողմը (էջ 181). — Արիստակէս Լաստի. վերցիի Պատմութիւնէն իրրե վկայութիւն բերուած կրճատ տողերը վերի յայտարարութիւնը չեն հաստատեր: Լաստիվերցին գրած է. Սոմուէլ հայրապետը, խումբ մը եկեղեցականներու հետ երթալով, «զանքս զկաղաղան կիզեալ ապականեաց, նշովելով զինչս և զստացուածս նոցա ... զի մի օք իշխեսցէ տանու ինչ, և վեց ի նոցանէն, զորս վարդապետս ասէին լինել չար և պիղծ կրօնիցն, զնոսին ձերբակալ արարեալ, գոյ ժողովով ի քաղաքագեղն, որ կոչի Ջերմայ, և աղուեսախարանօք զղկմս նոցա դրոշմիլ հրամայէ ...» (Տպ. վննետիկ. 1901, էջ 121):

4. — Էջ 280, առդ վերէն 23. — «Ժմինչեցութեան կատարի», այսինքն՝ մինչև որ Ս. Մնացեան ութութեք կատարուի: Եւ Արք. Դուրեան «ցուութեան» բառին կից նշանակած է «ծննդեան», հարցանիշով:

Պիտի ուզէինք մատնանշել այստեղ քանի «ը կարեւոր վրիպակներ» խորհելով

որ աստվ զգտակար կրնայինք ըլլալ ըն-
թերցողներէն ոմանց:

1. — էջ 27, տող վարէն 5.

երկու գրիւ հոյ, ուղղելի՛

» » հոյ:

2. — էջ 48, տող վերէն 23. — առա-
տութեանց, ուղղելի՛ առաստացութեանց:

3. — էջ 79, տող վերէն 25. — Եւա-
պատուան, ուղղելի՛ եւապատուան:

4. — էջ 82, տող վերէն 19. — յորդ-
ւոյ նոցա Յիսուսէ, ուղղելի՛ նորա:

5. — էջ 115, տող վարէն 13. — այժմ
ասին ելով. ուղղելի՛ ասին:

6. — էջ 128, տող վերէն 1. — Մրցել
և վատնես գիտ, ուղղելի՛ ըստ Ե. Արք.
Դուրեանի, Մրցել և վանել գիտ:

7. — էջ 130, տող վերէն 16. — Ետես
և այս արար, ուղղելի՛ այց:

8. — էջ 168, տող վարէն 5. — Եր-
կըրպագանել, ուղղելի՛ երկրպագել:

9. — էջ 176, տող վերէն 1. էջ 219,
տող վերէն 21. — յոյժ խառնակ էր այրս,
ուղղելի՛ խառնակ:

10. — էջ 185, տող վարէն 13. — Եւ
միւսն Նիկարա, ուղղելի՛ «Նիկանորա»
(Մատ. էջ 161):

11. — էջ 190, տող վերէն 26. — սուրբն
Յակով, ուղղելի՛ Յակոբ:

12. — էջ 248, տող վերէն 7. — Գըր-
գեալ էր քո, ուղղելի՛ Գրեալ:

13. — էջ 296, տող վարէն 17. — Եւ
յանհատան վերին եթէ մանրամասնարար
թեակոխեցեցաւ, աւելի լաւ, «Եւ յան-
հատան վարին եթէ մանրամասնարար թե-
ակոխեցեցաւ»:

Քանի մը նկատողութիւններ ալ կ'որ-
ծանագրենք Գր. Մագիստրոսի Քերական-
ութեան առկայ բնագրին վերաբերեալ՝
յօդուտ բանասիրաց:

1. — էջ 359, տող 13. — «Իսկ եթէ
ո՞ք եղև յարմարիչ». — Աւելի ճիշդ պիտի
ըլլար, ըստ վենետիկեան ձեռագրին,
«Իսկ եթէ ո՞ք եղև յարմարիչ»:

2. — էջ 366, տող 28. — «Կամ գի-
նայէ պո՞ւէր կրիւսոս յերկաթի կուսաս-
տանո՞ւ». — Հուսանարար պիտի ըլլար «Կամ
գի-նայէ, զոր պո՞ւէր կրիւսոս . . .»:

3. — էջ 367, տող 2. — «Եւ կամ ի
չաւն, և առիւծեոյն». — Ուղղելի է «Եւ

կամ իշուն և առիւծեոյն», Ձեռ. Ս. Թ.
թիւ 1311 ունի «կամ իշուն և առիւծե-
ոյն» (էջ 366):

4. — էջ 396, տող 1. — «Իսկ որն». —
Ճիշդը պիտի ըլլար «ոյն», համաձայն
վենետիկեան ձեռագրին:

5. — էջ 400, տող 19–20. — «Երկրորդ
երկրորդ փառաւորեան երկարեցոյց
գիւն». — Նախընտրելի է վենետիկեան
ձեռագրի տարբերակը, որուն կը ձայ-
նակցի Ս. Թ. թիւ 1311 ձեռագիրը (էջ
258), այսպէս. «Երկրորդ երկրորդ փա-
ռաւորեան երկարեցոյց գիւն»:

6. — էջ 400, տող 21. — «Վերաբե-
րեսցի». «ճիշդը՝ «վերաբերիցի», ինչպէս
ունին վենետիկեան և Երուսաղէմեան (թ.
1311) ձեռագիրները:

7. — էջ 416, տող 21. — «Եթէ կեն-
դանիք». — Ուղղելի է «Եթէ են կենդա-
նիք», ինչպէս ունի Ս. Թ. թիւ 1311 ձե-
ռագիրը (էջ 304): Լմենք. վենետիկեան
ձեռագրի տարբերակը «Եթէ են»:

8. — էջ 428, տող 16. — «որ հանդերձ
այլով իսկիս». — Ուղղելի է «Իսկիւ»,
ինչպէս ունի Ս. Թ. թիւ 1311 ձեռագիրը
(էջ 336):

9. — էջ 461, տող 17. — «Իսկ զորորկ
և զխոշոր ի Բառագրոց թաւացն իմացիս». —
Ուղղելի է «Իսկ զզորորկ և զխոշոր քառ,
ի գրոց թաւացն իմացիս», ինչպէս ունի
Ս. Թ. թիւ 1311 ձեռագիրը (էջ 482):

էջ 474, տող վարէն 21–23. — «It is
a mistaken interpretation when in some
studies the Thondrakian heresy is confused
with the Paulician sect as identicals, con-
sidering the latter as the mere continuation
of the former» — Աւելի ճիշդ պիտի ըլ-
լար ըսել. «It is a mistaken interpretation
when in some studies the Paulician sect is
confused with the Thondrakian heresy as
identicals, considering the latter as the
mere continuation of the former».

էջ 485, տող վարէն 9. — Անպատշաճ
է Մագիստրոսի որդին վարմար որակել
«notorious». անձ մը, որ «lived his life
virtuously».

Պր. Լիւսն Ռաչերեանի աքնաջան աշ-
խատանքը վեր է ամէն գովեստէ: Հոյ և

Թ Ո Ւ Ր Ք Բ Ժ Ի Շ Կ Ն Ե Ր Ո Ւ Դ Ե Ր Ը Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ց Ե Ղ Ա Ս Պ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն Մ Է Ջ

Հառանդական է որ շատ մը ուրիշ բժիշկներ և կուսակցական գործիչներ գործեն դեռ մը ունեցան բնաջնջման ծրագիրը իրագործելու մէջ: Սակայն ներկայիս անոնց մասնաժամանակները կը մնան անծանօթ: Կոյին նաև բժիշկներ, որոնք մեծապէս գործակցեցան օրուայ իշխանութեան և անոր գործիչներուն հետ՝ իրագործուած ռեֆորմները ծածկել փորձելով: Այս կապակցութեամբ նշանակելի է Ուրֆայի քաղաքապետութան բժիշկին վարուելակերպը: Երբ քաղաքէն դուրս՝ Օսմանեան Խորհրդարանի անդամ երկու Հայ երեսփոխաններ ապանւնեցան ՎՄԱՆԱՆՈՐ Հաստատութեան պատկանող երկու առաքակապետներու կողմէ, ան սուս վկայականներ տուաւ, ընելով թէ անոնք բնական պատճառներէ մահացան: Կառավարութիւնը այսպիսի վկայական մը այս երկու երեսփոխաններէն մէկուն այրի կնոջ զրկեց, իր պահանջքը գոհացնելու նպատակով: Բայց երեսփոխանական Խորհուրդի 28 Նոյեմբեր 1916ի նիստին, նոյն կառավարութիւնը պարտագրուեցաւ ընդունիլ թէ երկու երեսփոխանները իսկուպէս ապանւնեցան: Այս իմաստով բարձրագոյն վիզիրը գրաւոր հաղորդակցութիւն մը զրկեց Խորհուրդին: Կառավարութիւնը ստիպուած էր այդ ընել, որովհետեւ Չորրորդ Բանակի Հրամանատար և Սուրիոյ և Լիբանանի Սանձնակատար Քէմալ Փաշան այս ոճերը Պոլսոյ Հայոց Պարտիաքիմալ և անխոհմօթէն խոստովանած էր: Տրապիզոնի նահանգին մէջ, ուր Հայերը բաւականաչափ ունեւորներ էին,

բնաջնջման արարքը — ինչպէս ուրիշ տեղեր — բնագործակաւ տւերու մի և կողովուրդ ընկերակցութեամբ կատարուեցաւ: Այս պարագային, զինուորական դատավարութիւններուն երկրորդ շարքին — 26 Մարտ — 17 Մայիս 1919 — եօթը տարաստաններէն միակ բժիշկը Տքթ. Ալի Սաիպն էր: Ան յատկապէս ամբաստանաւեցաւ անհամար թիւով մահուկներ, պատանիներ և յղի կիներ թուաւորելուն համար կարծիք Մահիկի հիւանդանոցին և շատ մը դպրոցական շէնքերու մէջ, որոնք որպէս առօրեայ պատսպարաններ կը ծառայէին իրենց ծնողները բնաջնջուած Հայ փոքրիկներուն, և կամ զանաւ ծովամար թիւով: Այդ շրջանին, Տքթ. Սաիպը Տրապիզոնի Հանրային Առողջութեան և Առողջապահական Մատակարարութիւններուն Տնօրէնն էր: Ողջ մնացող Հայ մանուկներ, վկայեցին թէ Տքթ. Սաիպին հիւանդանոցին յաճախական այցելութիւններուն արդիւնքը քսանեակ մը անձերու անհետաւայն էր: Անոնց մեծամասնութիւնը մահուկներ էին: Ան տարաստանուեցաւ որպէս հեղուկ գեղ թոյն ներարկելով, և հրամայելով ծովամոյն ընել այն հիւանդները, որոնք այդ գեղը առնել կը մերժէին: Երկու Թուրք վկաներ ճշմարտութիւնը վաւերացուցին:

Ասկէ զատ, Տքթ. Զիյա Փուատ, Տրապիզոնի Առողջապահական Մատակարարութիւններու վերաբնիշխար ջարդին ժամանակ, և Տքթ. Ատման, Տրապիզոնի Հանրային Առողջութեան Տնօրէնը, գրաւոր վկայութիւններով հաստատեցին մանուկները թուաւորելու կամ զանոնք խեղդելու ամբաստանութիւնները:

Տքթ. Սաիպ ուրացաւ այս ամբաստանութիւնները և զանոնք միտադ վկաներ բերաւ, որոնցմէ երկուքը Հայ էին: Վերջապէս ան անպարտ արձակուեցաւ, այն պատճառաբանութեամբ, թէ յիշել ամբաստանութիւնները կարելի չէ վճռակարարական հաստատել:

ժողովրդական ժողովներ մեծապէս պիտի օգտուին ինչպէս իր նախորդ հրատարակութիւններէն, նոյնպէս և այս հատորէն անտարակոյս:

Ն. ԱՐՔ. ԾՈՒԱԿԱՆ